

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----“, ----- 2016 թ.

„-----“, ----- 2016 թ.

(արձանագրություն N° )

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ՊՐՈՖԼԵՄԱՅԻՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ**

**Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ**

**1. Ընդհանուր դրույթներ**

- 1.1. «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 4-րդ և 10-րդ հոդվածներին համապատասխան Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (այսուհետ՝ ՀԱԱՀ) պրոֆլեմային լաբորատորիան (այսուհետ՝ լաբորատորիա) ստեղծվել է ՀԱԱՀ գիտական խորհրդի 2004 թ-ի նոյեմբերի 16-ի որոշման հիման վրա (արձանագրություն N°2), որպես համալսարանի կառուցվածքային ստորաբաժանում՝ գիտական դեպարտամենտի կազմում:
- 1.2. Պրոֆլեմային լաբորատորիան իր գործունեությունը իրականացնում է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքին, այդ օրենքի հիման վրա ՀՀ կառավարության և այլ իրավասու մարմինների ընդունված իրավական ակտերին, ՀԱԱՀ-ի և նրա գիտական խորհրդի, գիտության դեպարտամենտի կանոնադրություններին (կանոնակարգերին), համալսարանի խորհրդի, գիտական խորհրդի, գիտության դեպարտամենտի և ռեկտորատի որոշումներին և սույն կանոնակարգին համապատասխան:
- 1.3. Լաբորատորիան գիտահետազոտական աշխատանքներ է իրականացնում ագրարային ոլորտի մասնագիտության ուղղությամբ, որի գործունեության կոնկրետ ուղղությունը հաստատվում է գիտական խորհրդի կողմից:
- 1.4. Գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող լաբորատորիաների ստեղծման, վերակազմավորման և լուծարման մասին որոշումները, սահմանված կարգով ընդունում է ՀԱԱՀ-ի գիտական խորհուրդը՝ համալսարանի գիտական

խորհրդի, գիտության դեպարտամենտի փորձագիտական հանձնաժողովի, ֆակուլտետների գիտական խորհուրդների առաջարկությամբ:

Համալսարանի գիտական խորհրդի որոշումը հաստատվում և գործողության մեջ է դրվում ռեկտորի հրամանով:

2. Պրոբլեմային լաբորատորիայի կառուցվածքը և ղեկավարումը

2.1. Լաբորատորիայի կառուցվածքը և հաստիքացուցակը սահմանվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին ՀՀ օրենքի կիրառումն ապահովող ենթաօրենսդրական ակտերով սահմանված չափանիշներով ՀԱԱՀ-ի ռեկտորի հրամանով գիտական խորհրդի որոշման հիման վրա:

2.2. Լաբորատորիան ղեկավարում է վարիչը, որը տվյալ բնագավառի հայտնի մասնագետ է, վարիչը կարող է լինել նաև ՀԱԱՀ-ի հիմնական հաստիքային աշխատող (ղեկան, ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, դոցենտ):

2.3. Լաբորատորիայի չորս (հաստիքով) գիտաշխատողին սպասարկելու է մեկ (հաստիքով) օժանդակ-սպասարկող աշխատակից:

2.4. Լաբորատորիաների համար սահմանվում է գիտաշխատողների հետևյալ տարակարգումները

2.4.1. Գլխավոր գիտաշխատող (ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի իսկական և թղթակից անդամներ կամ առնվազն 15 տարվա գիտական աշխատանքի ստաժ ունեցող գիտությունների դոկտորներ և (կամ) պրոֆեսորներ, ովքեր ղեկավարում են գիտական ուղղություն և (կամ) ստեղծել են գիտական դպրոց),

2.4.2. Առաջատար գիտաշխատող (գիտությունների դոկտորներ և (կամ) պրոֆեսորներ կամ առնվազն 10 տարվա գիտական աշխատանքի ստաժ ունեցող գիտությունների թեկնածուներ, ովքեր ունեն արժեքավոր աշխատանքներ, նախագծեր և մշակումներ),

2.4.3. Ավագ գիտաշխատող (գիտությունների դոկտորներ և (կամ) պրոֆեսորներ կամ առնվազն 10 տարվա գիտական աշխատանքի ստաժ ունեցող գիտությունների թեկնածուներ),

2.4.4. Գիտաշխատող (գիտությունների թեկնածուների կամ առնվազն 5 տարվա գիտական աշխատանքի ստաժ ունեցող մագիստրոսներ կամ դիպլոմավորված մասնագետներ, ովքեր ունեն գիտական աշխատանքներ կամ գյուտեր),

2.4.5. Կրտսեր գիտաշխատող (գիտությունների թեկնածուներ կամ մագիստրոսներ կամ դիպլոմավորված մասնագետներ):

2.5. Լաբորատորիայի աշխատակիցների աշխատավարձը սահմանված է ՀԱԱՀ-ի գիտական խորհրդի կողմից, ըստ պետական բյուջեից ստացված ֆինանսավորման, որը հաստատվում է ռեկտորի հրամանով:

2.6. Լաբորատորիայի վարիչը, ինչպես նաև գիտաշխատողները ընտրվում են ՀԱԱՀ-ի գիտական խորհրդի կողմից փակ գաղտնի քվերակությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ, մինչև հինգ տարի ժամկետով, նրանց աշխատանքի հրամանագրումը և աշխատանքից ազատելը կատարվում է ռեկտորի հրամանով:

2.7. Լաբորատորիայի թափուր հաստիքները համատեղությամբ պայմանագրային հիմունքներով կարող են զբաղեցնել այլ գիտական կառույցների աշխատակիցներ, ինչպես նաև ասպիրանտներ, մագիստրանտներ և ուսանողներ:

2.8. Լաբորատորիայի վարիչի իրավունքներն ու պարտականությունները

2.8.1. Ղեկավարում և համակարգում է լաբորատորիայում իրականացվող գիտահետազոտական աշխատանքները

2.8.2. ՀԱԱՀ-ի տարբեր կառույցներում հանդես է գալիս լաբորատորիայի կողմից:

2.8.3. Լաբորատորիայի վարիչի և գիտաշխատողների հիմնական իրավունքներն ու պարտականությունները սահմանված են գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին ՀՀ օրենքով (հոդված 5): Բացի այդ նրանք պարտավոր են կատարել օրենքով սահմանված աշխատանքային կարգապահության և ՀԱԱՀ-ի ներքին և անհատական իրավական ակտերով սահմանված կարգապահական կանոնները, որոնց խախտման համար կարող են ենթարկվել համապատասխան տույժի:

2.8.4. Լաբորատորիան պատասխանատվություն է կրում իրեն տրամադրված գույքի պահպանության, ըստ նշանակության և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև այդ գույքի կորստի կամ պատճառված վնասի համար՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Լաբորատորիային տրված գույքը պատկանում է Համալսարանին և կարող է տնօրինվել միայն Համալսարանի կողմից:

3. Լաբորատորիան վերակազմավորվում կամ լուծարվում է Համալսարանի գիտական խորհրդի որոշման հիման վրա՝ ռեկտորի հրամանով: